ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2023 թվականի N 420 Ա

‹‹ՍԻՍԻԱՆ, ԳՈՐԻՍ, ԻՄ ԿԱՊԱՆ, ՁԵԶ Է ՏԱՆՈՒՄ ԻՄ ՃԱՄՓԱՆ›› ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.‹‹Սիսիան, Գորիս, իմ Կապան, ձեզ է տանում իմ ճամփան›› խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:

2. Հաստատել՝

1)‹‹ Սիսիան, Գորիս, իմ Կապան, ձեզ է տանում իմ ճամփան›› խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ‹‹Սիսիան, Գորիս, իմ Կապան, ձեզ է տանում իմ ճամփան›› խորագրով մշակութային միջոցառման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.

3)‹‹ Սիսիան, Գորիս, իմ Կապան, ձեզ է տանում իմ ճամփան›› խորագրով մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N 3-ի.

4) ‹‹ Սիսիան, Գորիս, իմ Կապան, ձեզ է տանում իմ ճամփան›› խորագրով մշակութային միջոցառման նախահաշիվը՝ համաձայն հավելված N 4-ի.

5) ‹‹ Սիսիան, Գորիս, իմ Կապան, ձեզ է տանում իմ ճամփան›› խորագրով մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 24